Չալըխուշին բեսին Մարգիսին տունը շէյ
չի խալսեցաւ, Շիշման Պապիին տունը շէյ
չի խալսեցաւ. Շիշման Պապիին աներծա-
քին տունը շէյ չի խալսեցաւ:

1781, մայիսի Ժ-ումն այս է որ բէֆէ-
յի Գրիգորի որդի Մահտեսի ասվատուրն
ի կենդանութեան իւրում կտակ արաւ թէ
մեծ որդին առաջին կնոջէ եղեալ որ է

Գէորքն իմ մեռանելուն հոն ապրանքէս լախա չունի գէրէմ ավելօքն ավիլիմ նորա բաժին և մօրն բարիէն ևս մէկ ըստակի լախա չունի և սուրբ օթոնսհրուն իմ հոգեբաժինն առեւել եմ և գիրերն առիլ եմ. ունեցած ապրանքս այս է ին օխայ պախըռ ին օխայ խալայ, ին ուրբլի ըստակ վերոգրեալ Գէորգ որդվէս մատէ բ որդի ա. դուստր ևս ունիմ. այս վերոյգրեալ ապրանքն նացանն է, որ ինձի մինչև մահս պիտի պահին. մեռնելուս ետքը զըն ինչ որ մնայ բաժին թող անին. այս օրինակովն զրիլ տուի տէր Առաքելին վկայութեամբ առաջնորդ Օվսէբ վարդապետին և մագիստրատու դատաւորոց գիտութեամբն, որ ի ներքոյ ձեռս եթեալ են այսպէս

Իվան Ապրամով

Մկրտիչ Պետրոսեան

Ակոր Եղիեաով

Մանսեսի Վարդան Գէորքով

Ըստ խնդրոյ Չօչբօրովը մահտեսի Աստուածատուրին որովհետև կոյր էր և չէր կարող

զրիլ և ձեռք դնել ես հայոց բահանայ տէր Առաքէլս Նահապետեան զրեցի և ի տեղի նորա ձեռք զրի:

Որովհետև ըստ իւրոյ ծնողական պարտաւորութեան ի կենդանութեան իւրում. այսպէս կտակարարեալ էր մի Սասուածատուրն և ըստ զրոյ իւրում անդրանիկ որդոյն լիացուցեալ էր ի յաջողութեան, հաճեցաք ընդունել զկտակս զայս և վասն հաստատութեան սորին ձեռք դնել Յովսէփ արքեպիսկոպոս հայոց:

— —

1781, յուլիսի ԺԹ-ին խրկեցինք Մուկով կարդալու ժբ տղայ որք են այսոնք—

Ճեւանիրճի Սարգիսի օրդին Աքսենտ ժբ տարու.

Սուսեա Ակոր աղային եկէնը (քրոջ որդին) Աւետիք ժբ տարու.

Նայսերցի Եղիային օրդին Սարգիս ժբ տարու.

Արարնամին օրդին Օվակէմ ժբ տարու.

Տապախ Սողոմոնի որդին Օվանէս ժբ
տարու.

Ճորւկեցի նազարի որդի Քէսրք ժբ
տարու.

Շախման Վարդանին եկէնը Վարդերես
ժբ տարու.

Մարտին աղային որդին Մկրտիչ ժբ
տարու.

Տէր-Արուժիւնին որդին Չաքար ժբ.
տարու.

Օվակէսի որդի Մինաս ժբ տարու.

Բարազօղլը Սիմաւոնի որդի Պետրոս
ժբ տարու.

Մհի Միլէսէրի որդի Սիմոն ժբ տարու.

1781, նոյեմբ. Ժե որ եղև ներ քաղա-
քօջս մերում նախիջևանայ և ենթ մագիս-
արատին մերում. ես ի ներքոյ գրեալս որ
ձեռք պնելոյ եմ ի ներքոյ վերոյգրեալ թուէս
քանի մի օր առաջ զիս օրինօք առաջի վե-
րոյ մագիստրատին ձեծեցից աղայքն մեր
վասն զի ընդդէմ էի օրինացն հայոց և ինքս

հայ գոլով ազքն հայոց ոչ քրիստոնէս ան-
ուվանեցի երս և զիս տօնցկի սաստիկ իմ
ասեղօլս վասնորոյ զանեցին զինաւստիկ որ
իրաւի արժանի էյի. դարձեալ նոյն շարու-
թիւնն որ սերեալ էր ի սիրտս իմ քնայի
ի սագն (войско) գրեցի անաշինէ (доношение)
և ետու ասելով թէ անհաւատ ազքն հայոց
զիս ձեծեցին ես խաղախ էի և մկրտեալ իմ
կրկին օրինօք եմ ոռակի, այսպէս և որ
սոցին նման է սասցի գրով ի ոյսքն: Այս
պարտաւորութեանս որպիսի դատապարտու-
թեան արժանն էյի բայց այս մէկ հեղու ևս
ըլիճայօջն տիւրկէր Մարքար աղային ողոր-
մեցան ինձ որովհետև ես ևս մեղա զօչեցի
վասն այսորիկ խաղանաթս պաշխեցին բայց
այսուետև թէ որ մէմալ մազի խտտար մէկ
թիւրլի ծուռ ճամբա որ կտնվիմ նը մինչև
մահս եմ ի ձեռն դատաւորաց վերոյ մա-
գիստրատիս լիցի անողորմաբար դատա-
պարտեցեն զիս որ ձեռք գրի ինձ հաճոյ է
Ըստերանօսի որդի Սամուէլը, ձեռքը դրի
վերօքրեալ բանը ինձի հաճօ է:

1781, նոյեմբ. ին հէսապ տեսանք մի-
 րիէն աննված Պոլուանկի տուներոցն վէ
 տրված քերէստէներս որ ավինք մագիս-
 տրատէն և բօթրաթչիկներուն խորտել ար-
 վածներս և զեղացոյ տունքն ամենայն մի
 ըստ միոջէ որ ատկապէս ի ներքոյ գրեալ է-
 բոթրաթչիկներուն ձեռքոցն խորթել տուած
 տուներս բատէ 835. քարէ թէմէլով վրան
 քիբբիչէ խորզել տուած տուներս 334.
 մագիստրատէն խորզած տուներս Պոլու-
 տենկին միրիի տուներոցն 227 ք.
 Չալթը գեղի տուներն 66 »
 Ծառուկ օղամանին գեղի տուներն 29 »
 Սիմաւոն » » » 15 »
 Պուկաս » » » 37 »
 Սարգիս » » » 31 »
 Սւաք » » » 41 »

1616

որ այս վերոյգրեալ տունին խորզվելու ըս-
 տակին ձէճն 80800 ուրլի: Մինչև ցայսօր
 մերիէն մեղի ըստակ թէսլիմ էզիլ է 64500 ո.

մնաց աննիլիքներս 16300 ուրլի:

1782, յուվարի Ժ-ին թէսկէրէ խրկե-
 ցինք Սիմէօն վարդապետին և հոքևոր դա-
 տարանին թէ որպէս պատվիրեալ է Սրբա-
 զան Յովսէփ արքեպիսկոպոսն մեր մի թա-
 զեսցի յաւիտեան մեռեալ ի մէջ քաղաքիս
 այսինքն սուրբ Նիկողոսի ազպարն:

1782, յուլիսի Ժ-ին Պահչըսարայցի
 Նիկողոսի որդին Կարապետն իւր մօրն շատ
 ծեծիլ է, թեզն տեղէն հանիլ է, խապուռ-
 զան կտարել է. մահալացիքն մահտեսի Ծե-
 բոնն և մեր պարոն Նիկողոսն և Թիբիճի
 Օվանէսն և Մանիէլի որդի Պապասինը և
 այլ բազումք: Ինքն ևս ըլխար արաւ, թէ
 գդ անգամ մը թիւրթմիշ արի, մազիստրա-
 տիս առջին 188 չպուխ զարկինք անողոր-
 մաբար. ետոյ ձեռքէն զիւր մը առինք, որ
 մէմալ խում խմելու չէ:

Յովսէփ արքեպիսկոպոս և հոքևոր հայրն
մեր քա:



Ա Փ Ո Ր Ի Ջ Մ Ն Ե Ր

Ա.

Աշխարհը փառքի, հարստութիւնների
և իրաւունքների վիճակախաղ է. վայ տար-
ւոյին:

Աշխատութեամբ ձեռք բերւած պտու-
ղը, հաճոյքներից ամենաքաղցրն է:

Անձնիշխանութիւնը բոլոր առաքինու-
թեանց մայրն է:

Արգարութիւնը մի գեղեցիկ վարդ է,
որ միշտ փշերի մէջ է թագնւած:

Այն մարդը, որ ոչ ոքի չի հաւանում,
աւելի թշուա է, քան այն մարդը՝ որ ոչ
ոքին դուր չի գալիս:

Ամենամեծ հարստութիւնները արդիւնք
են մարդկային աշխատանքի, հետևապէս
աշխատաւոր դասակարգը պիտի լինի նրանց
տէրը:

Ազատ ոգու համար ամբողջ տիեզերքն է
հայրենիք:

Ամէն մարդ մի ցառ ունի կրելու,
սակայն նա է խելօքը, ով այդ լուսթեամբ է
կրում:

Ապրել այնպէս, որ միշտ հանդիսա
խղճով մեռնել կարողանաս:

Ամբոխը միշտ էլ արհամարում է ծագ-
րում միայն այն մարդկանց, որոնք վախե-
նում են նրանից:

Անկարծիքի երջանկութիւնը կայ ան-
մխիթար կարծած թշնամութեան մէջ ալ:

Աշխատանքը հեռացնում է հիւանդու-
թիւն և ձանձրոյթ: Բանում է ախորժակ,
քուն է բերում, դարթացնում, գոհ է դարձ-
նում մարդուն: Աշխատանքի վարժող մար-
դու համար անգործ մնալը մեծ պատիժ է:

Ամբողջ աշխարհը մի բնի է, իսկ
ողամարդիկ և կանայք զերակատարներ,
ամեն մէկը ունի իւր համապատասխան
գիրը:

Աշխարհս կառավարում են սէրը և
բողոքը:

Բ.

Բոլոր ազնիւ մարդիկ տանջոււմ են,
միայն անասուններն են, որ երջանիկ կեանք
են վարում:

Բարկութեան զեղը լուսթիւնն է:

Բամբասանքը երեք մարդու է սպա-
նում. բամբասողին, բամբասուողին և նրան,
ծով հաւատում է:

Բոլոր չարութիւնների պատճառն է
արծաթասիրութիւնը:

Բարկութիւնը կարճատև խելագարու-
թիւն է:

Բարիք անելով մարդս նմանում է
Ասածուն:

Բոլորն էլ ուզում են ժայտեր ցնդե-
ցնել, բայց ոչ ոք չի ուզում թմբեր հարթել:

Բախտը մի սուտեր է, փառքը երազ:

Բախտը ժպտում է ոչ թէ նրանց, ո-
րոնք խօսում են, այլ նրանց, որոնք գոր-
ում են:

Բնութիւնը դեղեցիկ և ընտիր հան-
գամանքով է օժտած կլինը, բայց այս հան-
գամանքը խախտեցին՝ բնութիւնը և օ-
րէնքը:

Բարի մարդու սրտին ուրիշի վիշտն էլ
մօտիկ է:

Բախտաւորութիւնը կուրացնում է
մարդուն, որովհետև միայն դժբաղդութեան
մէջ կարող ես լաւ տեսնել և ճանաչել խեղճ
և անկեղծ բարեկամներ:

Գ.

Գերագոյն երջանկութիւնը, որ ընկ-
նում է մարդուն, այն է—պաշտպանելով
սեփական գործը՝ ընդհանուր գործին ծա-
ռայել:

Գողը իր տունը չի կարող շինել,
բայց ուրիշի տունը կըքանդէ:

Գող, սիրալ դող:

Գեղեցիկ կինը աչքի դրախտ է, սրտի
դժոխք, քսակի բարաւան:

Գեղեցիկ արտաքինի տակ յաճախ
թաղնւած է լինում տղեղ ներքինը:

Գինին այնքան մարդ է խեղդել, որ-
քան ծովը չի խեղդել:

Գրքերը այն գանձարաններն են, ուր
հաւաքւած են հազարաւոր իմաստուն մարդ-
կանց փորձերն ու գիտութիւնները:

Գրքերը նոյնն են հոգու համար, ինչ
որ կերակուրը մարմնի համար:

Դ.

Դու ըրախում ես կեանքի դուռը, իսկ
մահը ասում է «ներս մտիր»:

Դու քեզ խրատիր, քան թէ քո սիրե-
լինիքը:

Դատարկ գլուխները՝ դատարկ հաս-
կերի նման գլուխները ցրց են պահում:

Դատողութիւն և կամք, ճիւ մարդ, այս
զէնքերով միայն կարող ես երջանկութիւն
ձեռք բերիլ:

Ե.

Երջանիկ է նա, ով կարող է միացնել
իր կեանքի սկիզբն ու վերջը:

Եթէ չես ուզում կեանքդ դառնացնել,
հոգս ու բարկութիւն հեռացրու քեզանից:

Եթէ յոյսը չըլինէր, որտեղ կըլինէր
ապագան:

Երջանկութիւնը ոչ այլ ինչ է, եթէ
ոչ այն, որ մարդհաշուում է ինքն իրան հետ:

Եթէ չլինէր տանջանքը, իրականու-
թիւնը ոչնչով չպիտի դանազանէր երազից:

Եթէ աշխարհի տէրը լինիս, քո մահը
մի մոռանար և որքան բարձրանաս, այն-
քան խոնարհ պահիր քեզ:

Եթէ խելացի մարդիկ անսխալական
լինէին, յիմարների բանը վատ կը լինէր:

Երբ դռների վրայ դրած է բռնու-
թիւն, իրաւունքը կանգ է առնում շէմքի
վրայ:

Երեք հանգոյցով է կապւած կեանքի

գաղանիքը՝ ծնունդը, ամուսնութիւնը և
մահը:

Երջանիկ է այն կինը, որ ունի արի-
ութիւն:

Եթէ իւրաքանչիւր մարդ կարողանայ
սիրել ամբողջ մարդկութիւնը, նա կը դառ-
նար տէր ամբողջ աիեղիքի:

Երիտասարդութեան մէջ մահը, ծերու-
թեան մէջ չքաւորութիւն՝ անտանելի են:

Երիտասարդութիւնը և ոյժը հարստու-
թիւն է, որ ժամանակն ամեն օր չի տալիս:

Զ.

Զգացմունքները երբէք չեն խաբում.
խաբում են դատողութիւնները:

Զոհարեբութիւնը ամենամեծ առաքի-
նութիւնն է:

Զւարճութիւնը հոգու առողջութիւնն է:

Զւարճութիւն — քսակիցդ հարցրու:

Զգուշացիր առաջին սխալմունքից:

է.

Էն ջրիցը վախեցիր, որ ոչ խշշում է,
ոչ թշշում:

Էշն ընկաւ յանկարծ դարբի հորը. էա
լաւ է, առաց, քան իմ ախոռը:

Ը.

Ընտանիքը ճշմարիտ կրթարանն է
քաղաքավարութեան, որի ամենալաւ ուսու-
ցիչը մայրն է:

Թ.

Թթենու տերևը համբերութեամբ բե-
հեզ է դառնում:

Թշնամին օգտակար է մարդուն, որով-
հետև նա ցոյց է տալիս պարտքերը և թե-
րութիւնները:

Թերահաւատութիւնը յառաջ է գալիս
ոչ թէ անտարբերութիւնից, այլ ազիտու-
թիւնից:

Թոյլ մարդը անհանգիստ է, մեծ մար-
դը հանգիստ:

Թոյլը խաբում է, ուժեղը հրամայում,
այդպէս է ժամանակակից կեանքի պայմանը:

Ժ.

ժլատութիւնը ամեն բան կը կորցնէ,
ամեն բան պահել ուզինալով հանդերձ:

ժամ առ ժամ մենք հասունանում ենք
ու հասունանում. իսկ յետոյ՝ ժամ առ ժամ
փթում ենք ու փթում:

ժամացոյցը կեանքի խարտոցն է:

Ի.

Իսկական սէրը համբ է:

Իսկական սէրը կարեկից է, արդար և
հեզ:

Իմաստունը դարերի վարժապետն է:

Իմաստութեան սիկզը սեպհական
տգիտութեան ճանաչելն է:

Իւրաքանչիւր մարդ պէտք է ընտրէ
իր ճանապարհը դէպի բարձրը հասնելու
համար. հակառակ զէպքում նա կը մնայ միշտ
ներքում:

Ի՞նչ է մարդը. — Ախտերի,՞ հիւանդու-
թիւնների մի կոյտ, որ աշխարհում որո-
նում է իր որսը:

Ինչպէս կարող է ըստ կեանքը փոխել,
կրք դու ինքդ չկա փոխում:

Իր սխալները խոստովանող մարդը,
հեռանում է անսխալականութիւնից:

Իմացիր ըստ պակասութիւնները, կիմա-
նաս և ըստ առաւելութիւնները:

Ինչպէս հողը բոլոր բոյսերի մայրն է,
այնպէս և արեւցողութիւնը մայրն է ամեն
չարիքի:

Լ.

Լաւ սկիզբը դործի կէսն է:

Լաւ է մարդ խելացի թշնամի ունենայ,
քան թէ անխելք բարեկամ:

Լաւ է ծուռ նայել, քան թէ ծուռ խո-
սել:

Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք:

Ս.

Խելքն ու զգայնութիւնը, երկու բաներ
են, որ հարստութիւնը ոչ կարող է ապա և
ոչ էլ աւանդ:

Խօսքը արծաթ է, լուսութիւնը ոսկի:

Խաղաղութեամբ ապրողը հանգիստ կը-
քնի:

Խնկով-մոմով արքայութիւն գնալ չի
լինի:

Խնայած փողը կրկին անգամ աշխա-
տած է համարում:

Խելացի էրիկ, համբերող կնիկ, տունն
է երջանիկ:

Խելօք մարդուց ապտակ ստանալը ա-
ւելի դուրեկան է, քան թէ յիմարի համ-
բոյրնիքը:

Խելօք մարդու անցած մի օրը, յիմա-
րի ամբողջ կեանք արժէ:

Խիղճը սրտի դաստիարակն է, նա մեզ
առաջնորդում է գէպի բարին և լաւ գոր-
ծեր:

Ծ.

Ծիածանը երբ երկար է մնում, նրա վրայ ուշք դարձնող չկայ:

Ծայրահեղութեան հասցրած խեղացի-
ութիւնը մի այնպիսի իմաստութիւն է, որ
կարելի է հակառակ մտքով էլ հասկանալ:

Ծոյլը հաց ուտելիս առողջ է, իսկ աշ-
խատելիս հիւանդ:

Կ.

Կեանքը մի վայրկեան է երկու յաւի-
տեանականութեան մէջ:

Կարճախօսութիւնը խելքի հոգին է:

Կայէն և Աբել, ահա համաշխարհային
պատմութեան գրեթէ ամբողջ լուսանդակու-
թիւնը:

Կեղծիքը նսեմացնում, ստորացնում է
այն ամէնը, ինչ որ նրան զիպչում է:

Կեանքը միայն աշխատանքի մէջն է:

Կեանքը լուրջ է թւում այն մարդ-
կանց, որոնք լուրջ հոգի ունին:

Կեանքը սիրոյ ծաղիկներ են:

Կնոջ բերած փողը զոան զանգակ է.
Ներս ու զուրս անելիս ճշկատիգ կրդիպչի:

Կայ միայն մի երջանկութիւն, դա—
պարտականութիւնն է: Մի զարճութիւն,
գա աշխատութիւնն է: Մի պերճանք, դա—
գեղեցկութիւնն է:

Կեանքը մի պատերազմ է:

Կնոջ սիրաը երկների մի մասն է, բայց
երկների նման էլ գիշեր-ցերեկ փոխում է:

Կինը իր ամուսնու խորհրդականն է:

Կեանքը մի երկաթուղի է, տարիները
նրա կայարաններն են, մահը նրա վերջին
կայարանը, իսկ բժիշկները վայրաշարժի
հնոցապանները:

Կինը երբ զուրկ է իւր պատշաճի
պարտաճանաչութիւնից, նա կատարելա-
գործւած սատանայ է:

Կնոջ արժանիքը չափելու համար, ի-
մացէք, թէ նա ունի է սիրում:

Հ.

Համբերութիւնը և աշխատանքը ամեն բանի յազթում են:

Հաւատարիմ և խոհեմ բարեկամը լաւագոյն աղբահան արժէ:

Հեշտ աշխատողը հեշտ էլ կը ծախսէ:

Համբերութիւն չունեցողը ոչինչ չունի:

Հայրենիքի սէրը ընտանիքից է սկըւում:

Հարստի բաւականութիւնները ձեռք են բերում թշուառների արցունքներով:

Հարբեցողութիւնը մարդուն իրեն միջից հեռացնում է և տեղը անասուն է դընում:

Հարստութիւնը նախ նպատակ է և ապա միջոց:

Հասարակական կեանքի հիմքը մարդկային աշխատանքն է:

Հիւանդութեան ժամանակ պէտք է քաջասիրտ և հանդարտ լինել, որովհետեւ

հիւանդութեան շուտ բժշկւելուն քաջասիրտութիւնը և հանդարտութիւնը խիստ կարեւոր են:

Համարձակութիւնը ամրագնդւած հատուկ հրաշալիքներ է ծնում:

Չ.

Չախորդութիւնից աւելի շատ բան ենք սովորում, քան յաջողութիւնից:

Չեր գործերի վրայ բացարձակ իշխանութիւն ունեցիր. նրանց աէրը եղիր և սէթ է գերին:

Չեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք և օրիորդք. տասը լեզու սովորեցէք. ձեր լեզուն, ձեր հաւատը դայիմ բռնեցէք:

Ղ.

Ղամպարի լոյսը իր եզերափակ շրջանով նման է նոյն բարոյական գէմքին, որ սոււարացնում է իւր շուրջը իրենից տաճած բարոյական լուսով:

Ճ.

Ճշմարտութիւնը երկար չի ապրում մարմնապէս, իսկ բարոյապէս նա միշտ կենդանի է:

Ճշմարտութիւնը իմացական աշխարհի արեւն է:

Ճշմարիտ բարեկամ մի հատ ունեցողը երջանիկ է:

Ճակատադրի գէժ շարունակ տրտնջին ապարդիւն է. միայն արդար ճանապարհի վրայ անգուլ ու ժիր գործերով կարելի է անշուշտ բարիք ձեռք բերել:

Մ.

Մարդու հողին նրա գործերի մէջն է:

Մի ըստը լոկ ընկեր հացի, եղիւր նաև ընկեր լացի:

Մենք չունենք մի աւելի վատ ընկեր, քան մեր ետը:

Մահ և սէր. ահա երկու խոշոր զօրութիւններ:

Մարդկային ստորութիւններից ամենազատը գաւաճանութիւնն է:

Մի մարդ որ սիրում է ընտանիքը, նոյն սիրով կը ծառայէ և հայրենի աշխարհին:

Մարդ որքան բարձր ու վեհ նպատակներ ունենայ, նոյնքան էլ կը բարձրանայ ինքը:

Մահը ամենախստապահանջ պարտատէրն է:

Մարդը կամենում է ամեն ինչ խաւար տեսնել, որ իր սևութիւնը չերևայ:

Միշտ պատրաստ եմ լաւ մարդկանցից բան սովորելու:

Մի գրավիր գաւաճանութեամբ երջանկութիւն սրտնելու:

Մարդ իր գերեզմանի մէջ նաւահանգիստը հասած մի նաւ է:

Մարդը աշակերտ է, զժբախտութիւնը նրա ուսուցիչը:

Մինչև քսուս չանհա չես խրատւի:

Միայն բարոյական սկզբունքները կարող են ստեղծել մեծ ժողովուրդ:

Մարդը այն պատճառով է զժբախտ, որ չգիտէ, թէ ինքը բախտաւոր է:

Միայն նա է ճշմարտութեան իսկական մշակը, ով համբերատար է ձախորդութիւնների ժամանակ և մոռացկոտ կրած վիրաւորանքների վերաբերմամբ:

Մէկ ներկայ ունենք մենք այն էլ զընահատել չգիտենք:

Մի ամաչիր հարցնելուց, չգիտնալն աւելի ամօթ է:

Միտքն ու սիրտը մշտապէս կուի մղղկելով իրար հետ, կանսնաւորում են մարդու կեանքը:

3.

Յոյսը դժբաղդ մարդու երկրորդ հոգին է:

Յոյսը երազի քոյրն է:

Յիմարութեան դէմ ասուածներն անգամ իզուր են կուում:

Յուսահատութիւնը ամենամեծ թշնամին է երկարակեցութեան:

Յիմարները խօսում են անցեալի մասին, խելացիները ներկայի մասին, խելագարները ապագայի մասին:

Յիմարին խորհուրդ տալը նոյնն է, ինչ որ կոյրին հայելի տալը:

Յանդիմանելուդ միջոցին շատ դաժան մի լինիր:

Յոյսը որքան էլ խարուսիկ լինի, գոնէ հաճելի ճանապարհով է տանում մեզ դէպի կեանքի վախճանը:

Ն.

Նենգաւոր մարդու լեզւի ծայրին թոյն կայ. բայց ափսոս որ չի կարող կուլ տալ:

Նա է բախտաւոր մարդը, ով կանսնաւոր է կարգադրում իւր ժամանակը:

Նախանձը հիւանդ սրտի տենդ է:

Նա, ով ոչինչ չի անում, համարեա թէ
աւելորդ մարդ է:

Ներողամիտ մի լինիք մեծ գողերի
նկատմամբ:

Ներել գիտնալու համար հարկաւոր է
տանջւած լինել:

Շ.

Ծնորհակալութեան ու մարդասիրու-
թեան արմատն ու հիմքը համակրանքի
ղգայմունքն է:

Շատ քչիրը գիտեն իրենց հեռ յար-
մարել:

Շիրիմը սովորեցնում է մեզ, թէ մահ-
կանացու ենք:

Շատ տէրիք բռնակալներ չէին լինի,
եթէ նրանց հպատակները ստրուկներ չը-
լինէին:

Շուտ շուտ անգից հտնած ծառը պը-
տուզ չի տալիս երբէք:

Շատ տարիներ հաշտող չէ, որ եր-

կայնակեաց է համարւում, այլ այն՝ որ ա-
ւելի զգացել է, թէ ինչ է կեանքը:

Ո.

Ով չի սիրում, նա սիրա չունի:

Ուժեղը միշտ էլ ուժեղագոյնի կողմն է
լինում:

Ոչ ոքի խորհուրդը մի արհամարիք.
բայց ընդունելուց առաջ լաւ կշռադատիր.

Ուրախ սիրտը հեշտութեամբ կանցնի
կեանքի ամբողջ ճանապարհը. իսկ տխուր
սիրտը կըճոգնէ կէս ճանապարհին:

Ով կորցնում է իւր հաւատը, նա կոր-
ցնում է իւր անկախութիւնը:

Որտեղ չկայ սէր, այնտեղ չկայ ուրա-
խութիւն:

Ոչ մի վիշտ ինքն ըստ ինքեան այն-
քան մեծ չէ, որքան երկիւղը այդ վշտից:

Ոչ մի սուսեր այնքան մարմիններ չի
սպանում, որքան արծաթը հոգիներ:

Ոչ թէ մարմինը պիտի սպանենք, այլ
մարմնի ախտը:

Ուսումն մի անհրաժեշտ պահանջ է,
սակայն նրա բանալին աշխատասիրու-
թիւնն է:

Ուր չկայ սէր, այնտեղ չկայ և ուրա-
խութիւն:

Որքան կրթւած լինի մարդը, այնքան
աւելի վտանգաւոր կըլինի, եթէ նա խիղճ
չունի:

Ով իր կրքերին ստրուկն է, նա ստուկ-
ներից ամենավատթարն է:

Ով ուրիշի դրութեան է նայում, զո՞ճ
չէ իր դրութիւնից:

Ուրիշի ուտի վրայ բեռը թեթև է լի-
նում:

Ով ոչինչ չգիտէ, նա ամեն բանի հա-
ւատում է:

Որքան շատ ճնշես սէրը, այնքան նա
ուժգնութեամբ կըբռնուի:

Որտեղ երաժշտութիւնը՝ այնտեղ և
ամենայն բարիք:

Որքան բարձր է ծառը, նոյնքան ծանր
է լինում վայր ընկնելը:

Ով քեզ շողոքորթում է երջանկու-
թեանը ժամանակ, նա հետու կըլինի, երբ
դժբախտութեան մէջ ընկնիս:

Ուր կամք կայ, այնտեղ կեանք կայ:

Չ.

Չարութեան ճանապարհով բարիքի չի
կարելի համեկ:

Չկայ մեծութիւն այնտեղ, որտեղ չկայ
պարզութիւն, բարութիւն և ճշմարտու-
թիւն:

Չար կինը աշխարհիս փորձանքներից
ու չարիքներից ամենամեծն է:

Չկայ մի սխալ, որ կարելի չլինի ուղ-
ղել:

Չնչին կարծած սխալները մարդուս
ազքատացնում են:

Չարը թեկը ունի, իսկ բարին սողում է որպէս կրեայ:

Չպէտք է ատել առանց դատելու:

Չար մարդիկ երգ չունին:

Պ.

Պարտքը սարուկ է անուժ ազատ մարդուն:

Պատաւոր մարդու համար խոստումը համազօր է երգումի:

Պիտանի լինել միայն իր անձին, նշանակում է ո՛չ մի բանի պիտանի չլինել:

Պատմութիւնը ազգերի կեանքն է, իսկ վէպը մարդկանց:

Պարկեշտ կինը մի գաղտնի գանձ է, որ գտնողը խիստ լաւ կանէ, եթէ նրանով պարծենայ:

Պարզութեան մէջ ապրող մարդու զաւակները երջանիկ կը լինին:

Պերճախօսութեան գաղտնիքը լուրջ մնալն է:

Ջ.

Չուրը ընկնողը փէշերը կը թրջի:

Չանս, որ չըլլաւ կը քերիդ մօլին, չափով գործածէ գինին և օդին:

Չրի յատակին չոր տեղ մի փնտրիր:

Չուրն իր եղբրքը քար կը շինէ, քարը իր եղբրքը՝ մամուռ:

Թ.

Թամիկը իւր պարզութեամբ ու ազնուութեամբ նման է այն հանքերին, որոնք անյայտութեան մէջ ընկած կարօտ են մարդկային խելքի հանճարին:

Ս.

Սեպհական խելքով մտածելը այնպիսի համարձակութիւն է, որին շատ քչերն են ընդունակ:

Սէրը ամեն բանի յաղթում է:

Մէրը միայն ազատութեան հետ է ապրում համերաշխ:

Սիրոյ ոյժը հիմնւած է մեր կրքերի վրայ. նա թոյլի բռնակալն է, իսկ ուժեղի գերին:

Սէքն ու եռանդը այն անիւններն են, որոնցով առաջ են շարժուում մեր գործերը:

Սէքը սիրոյ գինին է:

Ստութբունը ամեն ախտերից ամենաստորն է:

Էրը երկնային կրակ է, որ բորբոքւում է մարդկանց սրտերում և լսվում ամեն բան:

Ստամոքսիդ հարցնելուց առաջ քսակիդ հարցրու:

Սէքը մի կոյր երեխայ է, որ կարող է շարի և բարու պատճառ դառնալ:

Սէքը չքաւորութիւնից չի միտնում, այլ լքումից:

Սիրոյ գործում բոլորը աւագակներ են հանդիսանում:

Սէքը աւելի զառնութիւն ունի քան քաղցրութիւն:

Սիրոյ կիրքը շոքու է նմանում, որչափ սեղմուում է, նոյնքան աւելի ոյժ է ստանում:

Սիրոյ երզը օրօրոցից սկսում է, գերեզմանում վերջանում:

Սիրոյ մասին խօսող ծերունին, ակնոց գնող կոյրից աւելի խենթ է:

Վ.

Վճիռները և կանայք սիրում են, որ իրանց հետամուտ լինին:

Վատ օրինակները փչացնում են բարի վարքերը:

Վատ հողի վրայ լաւ պարտէզ չի լինի:

Վատ օրերի բարեկամը ճշմարիտ բարեկամ է:

Վճռական միջոցները հրեհին հրաշքներ են գործում:

Վատ հասարակութիւնը փչացնում է բարի բարքերը:

Տ.

Տանջանքը իմաստութեան հայրն է,
սէրը՝ նրա մայրը:

Տգէտը նա չէ, որ ըան չգիտէ, այլ
նա է, որ կը կարծէ թէ ամեն բան գիտէ:

Տխուր լինել կը նշանակէ ինքն իրա
վրայ մտածել:

Տգէտի հետ շուր մի խմէ. գիտունի
հետ քար կրէ:

Աստծուն սրբան հաճոյ է, երբ հզրայր
եղբոր կը սիրէ:

Տմարդի կամուրջից մի անցնի, թող
հեղեղը քիչ տանի. աղւէսի հովանու աակ
մի մանի, թող ստիւծը քիչ պատառէ:

Տղամարդոց և կանանց կարևոր յատ-
կութիւնը խոհեմութիւնն է:

Տխրութիւնը կեանքի մէջ այն է, ինչ
որ անձրեղ բնութեան մէջ:

Տղամարդու մի տարւայ մտածածը,

կինը մի օրւայ մէջ տակն ու վրայ է ա-
նում:

Տ.

Տաւալին այն է, որը չի տառապիլ:

Տորչափ բազը կը լլայ քիզի բարե-
կամ, բարեկամներ քո բոլորքիդ ման կու-
զան: Զարթ օրեր, տխուր ամպեր պատե-
ցին: Աջ, ձախ նայէ, մնացեր ես առանձին:

Փ.

Փոքրոգութիւնից զգուշացիր, նա հո-
գու ժանգն է:

Փշացած սրտերում բարութիւնը թոյն
է դառնում:

Փխադարձ սէրը կեանք է, իսկ ա-
ռանձինը տանջանք:

Փուչ տղան փուչ հօր պատիժն է:

Փոքր աղբիւրից մարդ հանգիստ է
շուր խմում:

Բ.

Քիչ ման գալ և շատ գործել: այս է
կեանքի ամենալաւ ծրագիրը:

Քաջութեան ամենալաւ կողմն է զգու-
շութիւնը:

Քիչ խօսելը խելքի հոգին է:

Քիչ մտածողը շատ կը խօսի:

Օ.

Օտար կնոջ շքեռնքներէց երբեմն
մեզը կը կաթէ, որ սակայն օշինդրի պէս
դառն է:

Օրէնքը հզօր է, բայց կարիքի իշխա-
նութիւնը աւելի հզօր է:



ԵՐԱԶԱՅԱՆ

Ա.

Աստուած կրազում տեսնելը՝ լաւ է,
ամեն չարից կազառել թէ աղքատ է կը
հարստանայ, թէ հիւանդ է կ'առողջանայ:
Աստուած տան մէջ տեսնելը՝ տան նորո-
գութիւն է:

Աստղ տեսնելը լաւ է, եթէ տան մէջ
տեսնես, բարիքդ կ'աւելանայ, օտար տեղ
լինիս, յաջողութեամբ կը վերադառնաս:
Շատ աստղեր տեսնելը, ճանապարհ գնալ է
և շահ:

Աստղար աննելը, պատիւ է:

Արեղեայ տեսնելը, փառք պատիւ կ'ամ
կուի է:

Աքաղաղ մորթած, բարի և կուի նշան:
Ագռաւներ, թշնամիներդ կը յարձա-
կւին քեզ վերայ:

Աթոռ տեսնելը, մեծութիւն է:

Աթոռ նստելը, բարձրութիւն է:

Ալեոր՝ իրան տեսնելը, հարստութիւն է:

Ալիւրը շահ է և ոյժ, ալիւրն ամանով տեսնելը, մութազ է:

Ականջը, աղջիկ է, կամ աչքաւոյս: Ականջ կտրելը ֆլաս է:

Աղաւնի տեսնելը, շնորհք է:

Աղուէս տեսնելը, ա՛ն ու երկիրդ է, թէ որսաս, թշնամուդ կյաղթես: Աղուէսը, թէ մարդուց փախչի իւր պարտականը կը փախչի: Աղուէսի հետ կոխ անողը, իւր օգտին կոխ կանի:

Փոքր աղջիկ տեսնելը շատ օգուտ է:

Աղբիւր տեսնելը, շատ բաներից օգտուելու նշան է, աղբիւրից լացւելն, օգուտ է, աղբիւրից ջուր վերցնելը վատ է. աղբիւրից ջուր խմելը, շնորք է և բարի:

Աղ ու անանուխ տեսնելը, բարի և անուշ խօսք է. միմիայն աղ տեսնելը կսկիծ է. սպիտակ աղը, փող և օգուտ է. սև աղը, վատ խօսք և տրտմութիւն:

Աղի ձուկը, կսկիծ է և հոգս:

Աղի տեսնելը, մեծ զոյց է:

Ամպերի ճայթմունք լսելը, բարի է:

Սիրեն աղեղնաւոր տեսնելը, թշնամունդ լեզու է:

Աղիւս (անելը, տան շինութիւն է և լաւ:

Աղբատին բան բաշխելը բարի և օգուտ է:

Ամանութ անելը և պահելը, շահ է.

Այժ տեսնելը՝ ճանապարհ է:

Այլուած հանդերձը, (ջորը) մահւան ֆլաս և երկիրդ է: Այլուած և աւելուած տեսնել իւր տունը, ֆլաս է:

Անձրև ժամանակ տեսնելը, բարի է:

Անդաստան տեսնելն, աշխատանք է:

Անտպատում նստելը, նեղութիւն է:

Աչքեր տեսնելը, շատ հարստութիւն է:

Մէկ աչք ունենալ, երկարակեցութիւն է, աչք հանել, կնոջ կամ որդու մահ է:

Սպարանջանը, նեղութիւն և հոգս է:

Սոխիւ տեսնելը, թազաւոր, իշխան և կամ մեծ մարդ է:

Եթէ երկու առիւծ իրար հետ կուխն,

երկու թագաւոր կամ երկու մարդ կը կըռ-
ւին:

Եթէ դու առիւծի վրայ նստած լինիս
պարոնութիւն (աղայութիւն) կանես:
Եթէ առիւծը դէմդ դուրս գայ, մեծ մար-
դուց երկիւզ կը հասնի քեզ:

Առու տեսնելը դանձ և օգուտ է:

Ատամ.— Եթէ բոլոր ատամներդ թափ-
ւին, շատ դանձ կը գտնես: Եթէ առաջին
ատամդ ընկնի, սղի կը հանդիպես և ճա-
նապարհ կը գնաս: Առաջին ատամները հա-
նելը սրբոց մահ է գուշակում: Ներքին ա-
տամները հանելը, տրամութիւն է, իսկ թէ
վիրինը հանես, ազգականներից մէկը կը
մեռնի: Սկսցած ատամները, հիւանդու-
թիւն է:

Արեգակ տեսնելը, թագաւոր է: Արե-
գակը իւր ձեռքում տեսնելը, պարոնութիւն
է տեսնողի համար: Խաւար արեգակ տես-
նելը, տեսնողի համար չար է: Երկնքից
ընկած արեգակ տեսնելը, թագաւորի մահ
է: Արեգակ տեսնելը նիզութիւն է, արևն

ամպի տակ տեսնելը, նիզութիւն կամ պալ-
ճառութիւն է:

Արծաթը նիզութիւն է: Արմաւը, շաա
քարի և անոյշ խօսք է: Արմաւենին գաւակ
և ուրախութիւն է:

Արիւն թափելը, մեծ ֆրաս է:

Արիւն կամ արիւն առնելը, շնորհք է:

Արծիւ տեսնելը, աւագութիւն է: Ար-
ձւի վրայ նստելը, պարոնութիւն է: Արձւի
հետ կուռելը կամ խփելը, մեծ մարդկանց
հետ կուռելու նշան է: Եթէ արծիւը քեզ խփի
մի պարոնից զէնք կստանաս:

Արջ տեսնելը տգէտ մարդու խօսք է:
Արջից հալածելը կուռից կաղատես կամ
մեծից զբոյժ կաց:

Ամեն դայլ գազան. թշնամի է:

Աւետարանը հալալ մուրազ է:

Աւագը որ ձեռքդ ամնես, մեծ մար-
դուց բան կստանաս:

Աւագակ որ տեսնես զգուշացիր կըռ-
ւից:

Բ.

Բարձրանալ երազում և վայր ընկնել մէկի ձեռքով, մահաւն վրաս է:

Բարձր տեղերի վրայ քայլելը մեծութեան հասնել է:

Բարձր տեղից ընկնելը վրաս է:

Բարև տալը կոխ է: Բաղնիքը, հոգս է: Բաղանիք եթէ գնաս, խաբէութեան մէջ կրկնիս:

Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսից կազատուիս: Բաղանիքում լացուելը սոճիկ և մեծ նեղութիւն է:

Բազ տեսնելը, մեծ մարդ է:

Բազ շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է:

Բահը լիզու է:

Բամբակը արդարութիւն է:

Բանջարը շահ է:

Բերք որ տեսնես, թշնամիներիդ մօտ ճշմարիտ դուրս կը գաս: Բերք մտնելը, պարիսպ և ամբութիւն է: Բերքի մէջ-նեղութիւնից ազատուել է:

Բերան լանալը, սոճիկի պակասիլ է: Բիր տեսնես կամ առնես, եղբայր կամ որդի է: Բիր կոտորելը, եղբոր կամ ազգականի մահ է:

Բլուր տեսնելը, երկրի խաղաղութիւն է:

Բու տեսնելը, նեղութիւն է:

Բուրվառ տեսնելը կամ առնելը լաւ չէ, կոխ է:

Բուրդ.—Սպիտակ բուրդ տեսնելը կամ առնելը, անողջութիւն և օգուտ է: Սև բուրդը սուգ ու լաց է:

Բոբիկ իրեն տեսնելը, զէնք կգայ իւր վրայ:

Բորոտ իրան տեսնելը գանձի շատանալ, մեծութիւն և շահ է:

Բողբ ուտելը, անողջութիւն և օգուտ է:

Գ.

Գառներ տեսնելը մեծ շահ է: Գառներ մորթելը լաւ չէ: գառներ լանալը զէնք և տրտմութիւն է:

Գազան տեսնելը առանց ֆլաստի կոխ
և երկիրդ է: Գազանի խաղալը թշնամու
հաշտութիւն է, իսկ փախչելը խաղաղու-
թիւն:

Գանձ տեսնելը կամ առնելը շահ է:

Գարին բախտ կամ բաժին է:

Գալ սպանելը թշնամու յաղթել է.
գալի վրայ նստելը նեղութիւն է:

Գաւազան տեսնելը թշնամու գէմ
պաշտպանել է: Գաւազանը ձեռքիդ լաւ է,
որդի կամ մեծ շահ է:

Գաւթ բռնելը, զաւակ (ունենալու)
ուրախութիւն է:

Գետ անցնելը ձի հեծնել է: Յտակ
ու պարզ գետին մտիկ տալը, առատութիւն
է, պղտորը լիութիւն է. գետում լացուելը
նեղութիւն է: Գետի վերեւից ներքև գնալը
պարտութիւն է:

Գերի տեսնելը նեղութիւն է, իրեն
գերի տեսնելը, մեծութիւն և օղուտ է:

Գերի ճանապարհ գնալ, նեղութիւն է:

Գերանը որ կտորւի, տանտէրը կմեռնի:

Գերեզման բանալը ֆլաս է. իրան գե-
րեզմանում տեսնելը պատասխանի ենթար-
կել կամ բանտ ընկնել է:

Գէշ հօտը, վատ խօսք է:

Գինի խմել կամ գնիլ, ոյժ և շահ է:

Գիսուտը աստղը մեծութիւն և պա-
տիւ է:

Գիրք կարդալը ժողով է և նեղու-
թիւն:

Գիր գրելը բարի և մուրազ է:

Գլուխը կտրած ձեռին առնելը մեծ
գանձ գտնել է, գլխին դեղ քսելը անուշ
խօսք է, գլուխ ածիլել տալը, նեղութիւ-
նից ազատել է. ուրիշների գլուխն ածի-
լելը ցաւից ազատել է. գլուխ լւանալը կամ
զլխով բան տեսնելը զէնք է: Սպիտակ
զլուխը յանկարծակի մահ է:

Գլխատած իրան տեսնելը, մեծ ֆլաս է:

Գխտոր տեսնելը ցոյց է տալիս ցըն-
գութիւն և աղքատութիւն:

Գնդակ խաղալը, մեծի համար լաւ է,
իսկ փոքր մարդուն վատ:

Գոմէշը գետի մէջ տեսնելը, բարձր
զրոյց է նշանակում:

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է:

Գոյնզգոյն հալաւը, ուրախութիւն է:

Գորտի ձայն լսելը, ուրախութեան
լուր է:

Գորտ եթէ սօգանհս, հաւատացեալ
մարդու հետ հաշտութիւն կանհս:

Գլխարկ ծածկելը, հարկի՛նք է:

Գրաւական հանելը իւր տանից մահու
փնաս է:

Գրոզ տեսնելը մտհեան մօտենալ է:

Գրիչ և կաղամօրը, խելը կամ ճանա-
պարհ է: Գրչամօնը, կին է:

Գ.

Գանակ տեսնել կամ գնել, լաւ չէ,
կամ վատ լեզուն խափանում է:

Գնալից որ դուրս գաս, ազատութիւն է:

Գատաւորն Աստուած է և դրութիւնդ
կըլաւանայ:

Գատաստանը, մեղաց քննութիւն է:

Դարպաս շինելը կամ տեսնելը, հա-
րուստ կնիկ է: Դարպաս փակելը մեծ մար-
դուց փնասել է:

Դարբինը մեծ մարդ է: Դարբնութիւն
թէ ինքդ անես, լաւ տնատէր կլինիս:

Դարբնի հարածը, ամենը բարի է:

Դեք, նեղութիւն և մեղքի նշան է:

Դղում ցաննելը, ջերմ. իսկ ուտելը,
հիւանդութիւն է:

Դուռը, պատիւ է և մեծ մարդու հետ
ծանօթանալ: Դուռ բանալը, իւր բախտի
բացելը և իւր կամքի կատարել է: Դուռ
ձգելը, կործանումն է: Դուռ կոտրելը, մա-
հու նշան է:

Դուռը դուրս դալը, լաւ չէ:

Դրամ տեսնելը կամ ժողովիլը ազա-
նութիւն է:

Ե.

Եզը նստած տեսնելը, մեծ աւետիս է
կամ զուգակից սիրելին կը գայ: Եզան միս
ուտելը լաւ է. բայց ոմանք ասում են թէ

նեղութիւն է: Եզնեբրի կոռուելը թշնամի է:

Եզը մորթել մահու փրատ է:

Եղնիկը տանը տեսնելը, սիրելին կը գայ:

Եզունի ունենալը աղքատութիւն է:

Եկեղեցի տեսնելը կամ շինելը փառք է:

Եկեղեցի դնալը ազատութիւն է:

Երկինք բարձրանալը, մեծ պատիւ է:

Երկիրը խնդութիւն է:

Երկանք տեսնել կամ աղալը անհան-

գատութիւն է:

Երկաթ տեսնել կամ դնելը, տրամու-

թիւն և շատ վատ է:

Երակ կտրելը, մահու փրատ է: Երա-

կից արիւն առնելը սրբութիւն է:

Երես լւանալը, զէն է: Դիզին երեսը մեղք է. կարմիր երեսը գործը լաւ կերթայ:

Դեղեցիկ երեսը, մեծ փառք է:

Երազ պատմելը երազում շատ լաւ է:

Երէցը յարութիւն առնելիս, հին զրոյց է: Մեծած աւագ երէցին կենդանա-
ցած տեսնելը, մեծ զրոյցի նորոգել է:

Երէցին մեծած տեսնել, մեծ զրոյցի խա-
փանուսն է:

Զ.

Զանգակի ձայն լսելը, ուրախու-
թիւն է:

Զաֆրանը հիւանդութիւն է: Զաֆրա-
նով կիրակուրը, լաւ է:

Զենիլը—մորթելը, մեծ նեղութիւն է:

Զինուորը, արամութիւն է:

Զմբուխը լաւ է:

Զնդանը մեծ հոգս է և սուգ:

Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսես,
անձրև կամ կռիւ է:

Զրոյց անելը, նեղութիւն է:

Զրածը, սպանութիւն է: Զրահ հանդ-
նելը զէն է:

Է.

Էջը շատ նեղութիւն է. սպիտակ էջին
հեծած կամ բռնած, բարի է և պատիւ:

Ը.

Ընկոյղ ժողովելը լաւ չէ:

Թ.

Թագաւորին ողջունելը փառք է:

Թամք շինողը, իրաւարար է:

Թանաք եփելը լաւ է: Թանաք վերե-

ւից Թափելը վատ խօսք է:

Թարախով իրան տեսնելը շահ է և հարսատութիւն:

Թագնւած իրեն տեսնելը, բարի է:

Թեւաւոր իրան տեսնելը, բարի է:

Թիաւոր իրան տեսնելը, հոգիներէ հանգրիպել է:

Թղի ծառը, լիբբ մարդ է.— Թուզը (կանաչ) տեսնել կամ ուտելը ֆլաս է: Թուզը (չոր) ուտելը, շահ է:

Թուխ իրան տեսնելը, մեծութիւն է:

Թռչելը, ուրիշ տեղ գնալ է: Թռչել

կտուրից, այլ կին առնել է:

Թռչել բարձրանալու համար, լաւու-

Թեան հասնել է. Թռչելիս ուրիշ երկրում մեծութիւն կտանայ:

Թռչունի քեղ մերձենալը, մի անձ երանի է տալիս քեղ. Թռչուն արձակելը, բարութիւն է. Թռչունի փակչելը, ֆլաս է:

Թռչունների կուելը, ֆլաս է: Թռչու- նի հետ խաղալը Թշնամոց սիրելու նշան է:

Ժ.

Ժամատունը զարգարւած տեսնելը, արքայութեան արժանանալ է:

Ժամ գնալը, կեանքդ բարի լինել է:

Ժամատան աղօթելը, լաւ բան անել է:

Ժամահարը վատ դրութեան հասնել է:

Ժամացոյցը օգուտ է:

Լ.

Լոյսը խաղաղութիւն է, լոյսը հան- զած տրտմութիւն է:

Լուսին և արեգակ աճաւօտեան տես- նելը, ազգին ֆլաս է:

Լուսնի աստղը, խիստ շահ է.— կար- միք լուսինը, ֆլաս է:

Սաւար լուսինը թագաւորի մահ է. երկու
լուսին տեսնելը թագաւորնեւր իրար դէմ կը
գիրկենան:

Լուսն, ոռճիկ է:

Լուծը (եգնիրի) բարի է:

Լեառն (բարձր) որ տեսնես, ազա-
տութիւն է:

Խ.

Սան կամ սուլթան տեսնելը, անչափ
լաւ է:

Սաչակնքելը հրազում մեծ պատիւ է:

Սաչը չարչարանք է:

Սաւարը նիգութիւն է:

Սաւիաբը, հիւանդութիւն է:

Սաղորդը, անձրև և ցնորք է. — սպիտակ
խաղորդը, խնդալ է, սևը լաւ, ժողոված
խաղորդը, դանձ է:

Սեցիդէն աման բռնելը, ուրախու-
թիւն է:

Սմոր ուտելը, շահ է:

Սնդակը լաւ չէ:

Սնձորը, աղայ է, խակ ուտելը շահ:

Սնձոր աննելը բարի համբաւ է.
խնձորի ծառը մեծ մարդ է:

Սուլ և համբը, օգուտ է:

Սուսնի ծխելը, ապրանք և անոյշ խօսք է:

Սորոված միս ուտելը, օգուտ է:

Սողը մահ է կամ այլազգի, խողի միս
ուտելը, ազգականների մահ է:

Սոտը լաւ մարդ է, ժողովիլը, պա-
տիւ է փառք:

Մ.

Մաղկեայ անդաստանը, շահ և ուրա-
խութիւն է, ծաղկելն անհանդատութիւն է.
ծաղրի բազիլը, կին աննիլ է. ծաղկիլը
բարի է:

Մաղկած ծառը, պտղով ծառը բարի է,
ծառ կարիլը կամ այրիլը վնաս է. ծառը
եթէ ծխի, լաւ չէ. ծառի տերև թափելը
արիւնահեղութիւն է. ծառ վայր ձգելը
մարդու մահ է, մեծ ծառ կտրելը, մեծ մար-
դու մեռնիլ է, ծառի վրայ նստելը և մահ

գալը փառք է. կանաչ ծառը, գանձ է. չոր
ծառը տրամութիւն է ծառ գուգիլը կին է:

Ծամ (հիւս) կարիլը բաժանումն է:

Ծառան աւետիբ է և ուրախութիւն:

Ծարաւիլը. լաւ չէ:

Ծանր բան շալակիլը, մեծ մեղք է:

Ծիծաղիլը, տրամութիւն է:

Ծնանիլը (կնոջ) մեծ շահի գալ է:

Ծունր գինիլը, առ Աստուած յոյս է:

Ծովը պղտոր, նեղութիւն է, ցամաք

ծովը աշխարհի լիութիւն է, ծովում լաց-
ւելը, օգուտ է. ծով մանիլը, թշնամիներից
ազատուել է, ծովը որ մարդուն ներս քաշի,
գողի ձեռքով սպանուել է նշանակում: Ծո-
վակի վրայ նստիլը զւարթութիւն է: Ծովից
դուրս գալը, պատիւ է և ազատութիւն, չը
դուրս գալը, մեծ վնաս է:

Ծերութեան ժամանակ իրան մանուկ
տեսնիլը, կիտնքի աւելանալն է. իրան ծեր
տեսնիլը մանկութեան ժամանակ, նոյնպէս
կեանքի աւելանալն է:

Կ.

Կամուրջ շինիլը, շատ լաւ է:

Կառք նստիլը, մեծ պատիւ է:

Եայծակը, խռովութիւն է:

Կարկուտը, երկրի նեղութիւն է:

Կարասը, նեղութիւն է:

Կաղամբի տակ հանիլը, վնաս է:

Կենդանի իրան գերեզմանի մէջ տես-
նիլը, մեծ դրոյց է:

Կին առնելը, մահւան վնաս է, կնոջ
հետ խօսիլը, տրամութիւն է, մազերն ար-
ձակած կինը, մահու վնաս է, գեղեցիկ
դարդարած կինը, երկիր է կամ քաղաք,
կնոջ մազ կտրիլը շատ վնաս է, կնոջ նա-
յելը, բարի և լաւ է:

Կխտրոնը, անոյշ խօսք է:

Կոյս իրան տեսնելը, խիստ շահ է.
Կոյսի հետ խօսելը տրամութիւն է. կոյսի
հետ հաց ուտելը լաւ է:

Կուժը, սրդի է. ջրով կուժը, բոլորու-
վին բարի է:

Կորեկ տանը տեսնելը կամ ուտելը
լիութիւն է:

Կրակ ձգելը, մահ է և սով:

Կտաւ հանելը, լաւ չէ:

Կօշիկ տանը տեսնելը կամ հագնելը
ճանապարհ է:

Հ.

Հաց տեսնելը բարի է և լաւ:

Հաւը ձւի վրայ, անսպասելի շնորհք է:
հաւ սիրամարդ մեծ իշխան է. հաւի խօ-
սելը՝ մարդու կհանքից զրկւելու նշան է:

Հաղորդ առնելը մարդու ծեծ է:

Հասկ քաղելը, ուրախութիւն է:

Հարսանիքը, տրամութիւն է:

Հայրապետը, մեծ զրոյց է:

Հայր.—մեռած հօրը կհնդանացած
տեսնելը, մեծ շահ է:

Հալաւ ալրած տեսնելը կնոջից շահ-
ւել է:

Հանդերձ կորցնելը, ֆլաս է:

Հեռաւոր տեղ իրան տեսնել կամ ու-
րիշ մէկին. շահ է և բարի:

Հիմք ձգելը, հարստութիւն է:

Հիւանդը, նեղութիւն է:

Հող վեր առնելը, նեղութիւն է:

Հում միս ուտելը մեծ զրոյց է:

Հոր փոքիլը, շատ նեղութիւն է:

Չ.

Չի.—Սպիտակ կամ սև ձի նստելը,
բարի և մուրազ է. վաղու ձի նստելը խիստ
լաւ է. սև ձի կամ ջորի նստելը մեծամեծ-
նեղից շահ ըստանալ է: Չին սարում տես-
նելը, մեծութեան հասնելու նշան է:

Չու լւանալ, բարի է, ձեռից ճրագ
բռնած որդի կլինի քեզ:

Չէթ եփելը մուրազ և լաւ է:

Չու տեսնելը կամ ժողովելը, կոխ է:

Չոր տեսնել կամ անցնելը, նեղութիւ-
նից կազատուես:

Չուկը, շար լեզու է.—ջրից հանես,
ամպ, ձիւն կամ ջերմ կլինի:

2.

Ղամսար վառելը, բարի է:

Ճ.

Ճանապարհ գնալն ու գալը բարի է:

Ճուտն՝ հրկայն ճանապարհ է:

Ճառ գրած տեսնել կամ լսել, հոգս է:

Ճնձղուկ տեսնել կամ բռնելը, բարի է:

Ճրագ վառած, ծածուկ գործ կյայտնութ. անցած ճրագը տան կործանումն է:

Մ.

Մատանին, իշխանութիւն է, մատանի կտարած, փլաս է. մատանին կորցնեա կինդ կամ սիրելիդ կմեռնի, երկու մատաննեալը, երկու կին կառնես:

Մարգարիտը, մեծութեան նշան է:

Մարդու ոսկոր ուտելը, բանա մտնել է:

Մեկեր ժողովելը լեզուներ են:

Մեծահասակ իրան տեսնելը. փառք է:

Մեռել—իրան մեռած տեսնելը. շատ ապրել է, մեռնին թէ խօսի զգոյշ կաց, մի

հաւատայ: մեռել թաղելը շփոթել է, մեռելը գերեզմանում տեսնելը, չարը կըխափանւի, շատ մեռելներ տեսնելը, թշնամիներդ կը յարձակեն:

Մեղր ուտելը մեղք է և սրտնեղութիւն:

Մետաքս տեսնելը օգուտ է:

Միս տեսնել կամ ուտելը հիւանդութիւն է. իսկ խորոված միս ուտելը, շահ.

Միրգ ուտելը հիւանդութիւն է:

Մոմը վառած ուրախութիւն և որդի է:

Մորիխը, հոգս է և աշխարհի փլաս:

Մութը, փլաս է և չար:

Մուկը, փլաս է և չար:

Մորուքով իրան տեսնելը, շնորհք է:

Ն.

Նախիրը որ գեղը գնայ, աւագ է:

Նապաստակը, իրան տղայ լինի:

Նաւ—Նաւորդ լինել, զրոյց դուրս կգայ. ոսկու կամ արծաթի նաւը, բարի է. նաւը նստես, շատ կապրես. նաւերի խումբ

տեսնես, շահ կգայ քեզ. նաւը գանձով նեղութիւն է. նաւը այրելը երկրի ֆլաւ է. կոտորած նաւը մահ է:

Նուաբ օտարներին շահելը:

Նստել և ողբալը, շատ նեղութիւն է:

Ծ.

Շապիկ սպիտակ տեսնել կամ կարել, արդարութիւն է. սեր, տրամութիւն է. աղտոտը մեղք է:

Շինութիւն կառուցանելը բարութիւն է. քանդելը ֆլաւ:

Շիշ իւզով, ոսճիկ և շահ է:

Շորեր (նոր) ուրախութիւն և շնորհք է:

Շորեր գոյնզգոյն ֆլաւ է, սև շորերը, աւազ մարդ կմեռնի: Շորեր կորցնելը ֆլաւ է:

Շների իրար հետ կռուելը, վատ է. շունը սր հաշէ կամ կծէ չար լեզու է և չար մարդուց պէտք է զգոյշ լինիս:

Ո.

Ոսկին կամ արծաթը, շահ է, ոսկի խնձորը, պատիւ է:

Ոչխարը, ձմեռ է և ցուրտ. սև ոչխարը սուգ և արտմութիւն է. ոչխարը ճանապարհին հարստութիւն է:

Ողբալը շատ նեղութիւն է:

Ուղտը, պարոն է. երկու ուղտի կրուելը իշխաններ կ'կուռին. էգ ուղտ նստելը հիւանդութիւն է:

Որսի գնալը, բարի է:

Չ.

Չամիչը, շատ ֆլաւ է:

Չամանը, կոխ և աղաղակ է:

Չանկը, արտմութիւն է:

Չիրը, սակաւ շահ է:

Չուխայ—կանաչ չուխան, հարստութիւն է. սեր, արտմութիւն:

Պ.

Պատարագը կոխ է:

Պարտէզ տնկելը, լաւ է:

Պղպեղը, կսկիծ է. պղպպեղ ուտելը
թշնամիներէից պատրաստ կաց:

Պսակ արծաթէ, հիւանդութիւն է,
փշից պսակ շինելը, մեծ շահ է, քարից շի-
նած պսակը, մեծութիւն է:

Պսակւիլը լաւ է, յաճախ կուիւ է:

Ձ.

Ձաղաց շինելը, մեծութիւն է, քան-
դիլը, շինութիւն է. Ձաղացի աղունը հիւան-
դութիւն է:

Ձայլամը, նեղութիւնից կաղատուես:

Ձուր մաքուր խմիլը, լաւ է, պղտոր
ջուր տեսնելը կամ խմիլը, արամութիւն է:

Տանդ մէջ ջուր տեսնելը, լաւ չէ,
զնացող ջուրը, բարի է. գետից ջուր վեր
տանելը, զրաս է. աղբիւրիցը բարի է:

Ռ.

Ռեհան ծաղիկը, բարի է:

Ռումըը կանգնած մեծութիւն և պա-
տիւ է ձեռքին ուժը բոնելը, ճանապարհ

և երկիր:

Ռուս տեսնելը մեծ հակառակութիւն է:

Ս.

Սալը մեծ մարդ է:

Սագ ուտելը, հիւանդութիւն է:

Սալորը, առողջութիւն է:

Սանդուխ (կանդնած) մեծութիւն է:

Սանր բոնելը, զէնք է:

Սեննակ քանդիլը, կնոջից բաժանուիլ է:

Սելը, լաւ է, ուտելը հիւանդութիւն:

Սիսեռը, բարի է:

Սիւնը, նեղութիւն և կուիւ է:

Սխտորը, կսկիծ է:

Սոխը, կսկիծ է, ուտելը հիւանդու-
թիւն:

Սուգ անիլը, ուրախութիւն է:

Սուլթան տեսնելը, անչափ ցաւ է:

Վ.

Վախեցած իրան տեսնելը, օգուտ է:

Վանք և արեղայ, նեղութիւն է:

Վառած մէկին տեսնել զրաս է, իրան

վառած տեսնելը հարստութիւն է:

Վարդը, կին կաննես, վարդ քաղելը
բարի է:

Վերմակը, հարուստ կին է:
Վիշապը մեծութիւն կամ փաս է.

Տ.

Տաճար զարդարած, բարի է. տաճար
այրելը թշնամիքդ կը կապւին:

Տաճիկը, թշնամիներէ արձակուսն է:

Տախտը մեծութիւն է, տախտը գի-
պտկով, բարի է. տախտը կանաչ, ցաւ է:

Տանձ ուտելը, հիւանդութիւն է:

Տառելի ձուկը, արտմութիւն է:

Տիկը արտմութիւն է:

Տղայի գիրկն աննելը, ցաւ է:

Տուն շինելը, շատ բարի է. տուն քան-
դելը, վատ է:

Տ.

Տեցը, լեզու է. ցեց հանելը նեղու-
թիւն կամ լաւ է:

Տեխը՝ փաս է արտմութիւն է. Տո-
րենքը ցնորք է.

Փ.

Փայտը շատ բարի է:

Փող ածելը, մեծութիւն է:

Փուշ քաշելը, թշնամու կորուստ է:

Փոխինձ ուտելը, զէնք է:

Ք.

Քաղաք մտնելը, բարի է:

Քար ձգելը, փաս է, ժողովելը լեզու է:

Քահանայից խաչ աննելը, վիշտ է:

Օ.

Օձի հետ խօսելը այնպիսի բան անել
է, որ ամբողջ աշխարհը կը զարմանայ. ան-
կողնի վերայ օձ տեսնելը կին աննել է:

Օձին անկողնում տեսնելը կնոջ մահ
է, օձը տանը տեսնելը. կնոջ թշնամանախ է:

Օղի խմելը ուրախութիւն է:

ԼՈՒՍՆԻ ԵՐԱԶԱՅՈՅՑ

- Էրանի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30,
 օրն—երազն ի բարին կատարի:
 » 2, 10, 12, 16, 28, երազն ի օրն կատ.
 » 8—երազն ութ օրն կատարի.
 » 23, երազը երեսուն օրն կատարի.
 » 14, երազն քառասուն օրն կատարի.
 » 11, 15, 17, երազն օրն կատարի.
 » 6, երազն ի տարին կատարի.
 » 29, երազն լաւ է.
 » 4, 7, 20, 21, 24, 25, 27, երազն
 սուտ է:



ՔՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՊԱԳՍԵ


Աստղագիտութեան համեմատ

Աստղագիտութիւնը միշտ մեծ դեր է խաղացել նախապաշարումների պատմութեան մէջ: Սկիզբը հետու, եզրուսից է սկսում:

Գիտնականների մի մեծ թիւ Անգլիայի և Միացեալ Նահանգների մէջ դրանով են զբաղում: Զբանսիայում չեն հաւատում և ծագրում են աստղային ազդեցութիւնների վրայ, սակայն անցեալը գիտենալ, ներկան լուսաբանել, ապագան ընդնմարել անվերջանալի փափագ է:

Ամերիկայում աստղագիտութիւնը տեղի է աւել զարմանալի գիտողութիւնների ամուսնութեան վերայ: Մի տիկին քննութիւն է կատարել Նիւ Խորքում 1908—1909 թ. մի ամսի մէջ 2000 ամուսնացող զոյգերի

վրայ, որոնցից 1181-ը տեղի են սենիցիւ
 Զողիակոսի զանազան նշանների ազգեցու-
 թեան տակ: Իր զիտողութիւնները, որ հրա-
 տարակել է տեղական մի լրագրում, ցոյց
 են տալիս, որ ամենից շատ և երջանիկ
 ամուսնութիւնները կատարում են հողի և
 ջրի նշանների մէջ:



ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

(Հաստատում 1918 թ. օգոստոսի 11-ին).

1. Նախիջևանում, Ռոստովում և Ս. Խաչ աւանում ապրող հայերը իրանց ան-
 դամների կուլտուրական կեանքը կառավա-
 րելու համար կազմում են Նոր-Նախիջևանի
 Հայկական Համայնք:

2. Համայնքի անդամ է համարում
 Նախիջևանում, Ռոստովում և Ս. Խաչ աւա-
 նում ապրող ամեն մի հայ, որ յատուկ յայ-
 տարարութեամբ չի մերժել իւր հայ լինելը
 և կամ ցանկութիւն չի յայտանել դուրս գալ
 սոյն Համայնքից:

3. Քսանհմէկ տարին լրացրած ամեն
 մի անդամ ձեռք է բերում ընտրելու և ըն-
 տրուելու իրաւունք:

4. Համայնքի բոլոր անդամների հա

մար կազմւորւմ ու պահուում են յատուկ մաստաններ:

Համայնական Խորհուրդ

5. Համայնքը վարում, տնօրինում և գործում է ի դէմս Համայնական Խորհրդի՝ բաղկացած 60 պատգամաւորներից:

6. Համայնական Խորհրդի լիազօրութիւնը տեւում է երեք տարի:

7. Համայնական Խորհրդի պատգամաւորների ընտրութիւնը կատարւում է դադտնի քուէարկութեամբ, որին մասնակցում են Համայնքի 21 ասորին լրացրած ու 4 յօդ. յիշատակուած յատուկ մաստաններում արձանագրուած անդամները, առանց սեռի խտրութեան: Բացի 60 պատգամաւորներից ընտրւում են նաև 10 անձնափոխանորդներ:

8. Համայնական Խորհրդի նիստերը տեղի են ունենում Նոր-Նախիջևանում: Խորհուրդն ունի կնիք իւր անուամբ:

9. Համայնական Խորհուրդն ունի իւր նախագահութիւնը՝ բաղկացած նախագահից,

երկու փոխ նախագահներից և երկու քարտուղարներից՝ ընտրւած մէկ տարով:

10. Նախագահութիւնը վարում է Խորհրդի նիստերը:

11. Համայնական Խորհուրդը սրտշում է Համայնքի օգտին՝ Համայնքի իւրաքանչիւր անդամից հասանելի տուրք-վճարումների չափը, հրատարակելով այդ մասին առանձին պարտադիր կանոններ:

12. Համայնական Խորհուրդը խնամում և հոգում է, ա) հայիրի լուսաւորութեան, բ) խնամատարութեան, գ) տնտեսական զարգացման, դ) տեղական հայկական կուլտուրական-կրթական և բարեգործական հաստատութիւնների և ե) հայ մամուլի վերաբերիալ խնդիրներ:

Համայնքի միջոցները

13. Համայնքի միջոցները կազմւում են.

- 1) նրա բոլոր անդամների պարտադիր տուրք-վճարումները, 2) կտակաւանդ շարժական և անշարժ կայքերն ու նուիրատուութիւնները,

3) պետութիւնից, քաղաքներից և հասարակական կազմակերպութիւններից ստացուող նպաստներ:

Համայնքի գործադիր մարմինները

14. Համայնքի գործադիր մարմինն է Աղպային Համայնական Վարչութիւնը:

15. Վարչութիւնը կազմւած է երեք անդամներից, որոնց ընտրուած է Համայնական Սորհուրդը Համայնքի 25 տարին լրացրած անդամներից երեք տարի ժամանակով. Վարչութեան անդամների ծառայութեան ժամանակը, յամենայն դէպս, լրանում է Վարչութիւն ընտրող Սորհրդի լիազօրութեան ժամանակաշրջանի լրացմամբ:

16. Վարչութեան մէջ նախագահուած է նրա անդամներից մէկը՝ Համայնական Սորհրդի որոշմամբ և ընտրութեամբ:

17. Ի դէմս Վարչութեան, իբրև գործադիր մարմնի, Նոր-Նախիջևանի Համայնքը, որպէս մի իրաւական անձն, իրականացնում է իւր բոլոր սեփականատիրական

և քաղաքացիական իրաւունքները, ձեռք է բերում շարժական և անշարժ կայքեր, վաճառում, (отчуждение) պայմաններ է կապում, իրաւաբանական պաշտպանութեամբ օգտուում և այլն:

18. Վարչութեան պարտականութիւնն է. ա) Համայնքի անդամների ցուցակագրութիւնը բ) Սորհրդի բոլոր որոշումների գործադրութիւնը, գ. Սորհրդի իրաւասութեանն ենթակայ խնդիրների մասին Սորհրդին գեկուցումներ և նախագծեր ներկայացնել, զ) Վարձել ծառայողներ Սորհրդի մշակած շտապի համաձայն, ե) գանձել և պահել Համայնքին պատկանած գումարները, զ) հաւատարմաթղթեր և լիազօրութիւններ տալ Համայնքի սեփականատիրական և քաղաքացիական շահերը պաշտպանելու համար:

19. Վարչութեան կից հաստատուած են Համայնական Սորհրդից ընտրուած նախապատրաստական յանձնաժողովներ՝ համաձայն Սորհրդի իրաւասութեան ենթակայ բոլոր գործերի յանձնաժողովները գեկա-

վարում են Խորհրդի տուած առանձին հրահանգներով և նակաղներով:

Խնդիրների քննութեան կարգը Համայնական Խորհրդում

20. Համայնական Խորհրդի նիստը օրինական է համարում, եթէ ներկայ է պատգամաւորների կէսը:

21. Բոլոր հարցերը վճուում են ձայների հասարակ մեծամասնութեամբ և բաց բուէարկութեամբ, բացի այն դէպքերից, երբ երեք պատգամաւոր պահանջին գողտնի բուէարկութիւն: Գողտնի բուէարկութեամբ է վճուում նոյնպէս և Համայնքի անգամութիւնից հեռացնելու հարցը ըստ որում վճուի կանոնաւորութեան հոմար անհրաժեշտ է ուժեղացրած մեծամասնութիւն, այն է ժողովին ներկայ եղող պատգամաւորների երկու երրօրդի համաձայնութիւնը:

22. Համայնքից հեռացնելու առիթներ են. 1) դատաստանական վճռով դատապարտումն այնպիսի բրէական յանցանքների

համար, որին ուղեկցում է իրաւունքների սահմանափակում, 2) ակնյայտնի արհամարանք դէպի Համայնքը:

23. Խորհրդի նիստերն արձանագրում են առանձին մատեաններում, որ կարգացում և ընդունում են ու վաւերացում նախագահի և քարտուղարներից մէկի ստորագրութեամբ:

Համայնքի փակումը

24. Մի որևէ պատճառով Համայնական գործերի լուծման դէպքերում նրա բոլոր միջոցները ընդհանուր ժողովի որոշմամբ յատկացւում են հայրի կուլտուրական գործերին և տրւում այն հաստատութեան, որի ձեռին են այդ գործերը:

Սոյն մակադրութիւնը տրուած է Ռոստովի Դ-վ. Երջանային Դատարանի կողմից, ղէգիստրասիոնի բաժանմունքում այն մասին, որ Դատարանի որոշմամբ 1918 թւականի օգոստոս 11-ից Լոր-Նախիջևանի Հայ Համայնքը անցրւած է ոչ շահագիտական նպատակ ունեցող ընկերութիւններ և միութիւնների ղէկատրի առաջին մասում:

№ 142



Տ Պ Ա Ր Ա Ն

ՍԵՐՈՎԲԷ ԱԻԱԳԵԱՆԻ

Նոր-Նախիջևանում.

Գոյութիւն ունի 1896 թւից.

Պարզաառեւած է արծաթէ մեղալիներով:



Տպարանի կարուս է հայկական պէս-
պէս աստերով, որովհետեւ հեռաւորութիւն
են սալիս ընդունել տա կասարել ամեն
տեսակ բարդ ապագրանիներ: Այս տպա-
րանում, բազմաթիւ հայերէն գրիտից
գրաւ, տպուել են յազրներ, շաբաբագրեր
եւ այլ հանդիսներ:



7122 5 3 P. 50 4.

7122 Нахичевань н-Д. Типографія
С. Я. Авакова.

5636

2013

20 02

« Ազգային գրադարան



NL0032943

